ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2014թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Սիմոնյան կրթական հիմնադրամի գրությունը, ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Սիմոնյան կրթական հիմնադրամին /հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672/ Երևանի Հալաբյան փողոցի հ.16 հասցեում Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասի մասով ընթացիկ տարվա համար տրամադրել հողի հարկի գծով արտոնություն՝ 1 715 800 /մեկ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր/ դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետի 2014 թվականի հունվարի 22-ի N 116-Ա որոշման հիման վրա Երևանի Հալաբյան փողոցի հ.16 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ Սիմոնյան կրթական հիմնադրամի անհատույց օգտագործման իրավունքը պետական գրանցում ստանալու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄԱՎՈՐՈՒՄ
«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Հալաբյան հ.16 հասցեում գտնվող 15.62հա մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով պատկանում է «ԷՓԻՋԻ ԼԵԲՍ ԷՅԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Նշված հողամասի ենթավարձակալ է հանդիսանում Սիմոնյան կրթական հիմնադրամը:

Երևանի քաղաքապետարան են դիմել «ԷՓԻՋԻ ԼԵԲՍ ԷՅԷՄ» ՍՊԸ-ն՝ 20.09.2000թ. կնքված գույքի վարձակալման, փոխանցման և զարգացման պայմանագիրը լուծելու առաջարկով և Սիմոնյան կրթական հիմնադրամը՝ վերը նշված հողամասն անհատույց օգտագործման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Երևանի քաղաքապետի 22.01.2014թ. հ.116-Ա որոշմամբ Երևանի Հալաբյան փողոցի հ.16 հասցեում Երևանի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Թումանյանի անվան զբոսայգու զբաղեցրած հողամասն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Սիմոնյան կրթական հիմնադրամին: Սիմոնյան կրթական հիմնադրամի՝ Հալաբյան փողոցի հ.16 հասցեում հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի 01.12.2014թ. դրությամբ հողի հարկի գծով հարկային պարտավորությունները կազմում է 1 715 800 /մեկ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր/ դրամ, որի համար 23.01.2014թ. գրությամբ Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է Երևանի քաղաքապետին՝ հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, նշելով, որ հիմնադրամը, հանդիսանալով քննարկվող զբոսայգու ենթավարձակալը, այն պահպանում է պատշաճ վիճակում և մինչ այժմ այգու բարեկարգման և պահպանման համար կատարել է ավելի քան 600 000 000 ՀՀ դրամի ծախս: Մասնավորապես՝ կառուցվել է նոր ենթակայան, վերանորոգվել է շատրվանը, կառուցվել են ֆուտբոլի, բասկետբոլի դաշտեր, տեղադրվել են ցայտաղբյուրներ, վերականգնվել է ոռոգման ցանցը, անցկացվել են նոր ջրագծեր, կատարվել են կանաչապատման և ծառատնկման զգալի աշխատանքներ: Այդ ծախսերի հետ մեկտեղ հիմնադրամը վճարում է նաև ենթավարձակալության վճար, որը տարեկան կտրվածքով կազմում է շուրջ 12 000 000 ՀՀ դրամ, մինչդեռ՝ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Կարևորելով հանրության համար Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից Երևանի Հալաբյան փողոցի հ.16 հասցեում գտնվող զբոսայգու բարեկարգման, այգու պահպանման ուղղությամբ կատարված մեծածավալ աշխատանքների, այդ տարածքում իրականացվող կրթական ծրագրերի դերն ու նշանակությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այգու տարածքում մինչ այժմ իրականացված բարեկարգումները որևէ կերպ չեն հետապնդում շահ ստանալու նպատակ, ինչպես նաև կարևորելով Թումանյանի անվան զբոսայգին մշտապես ըստ նշանակությամբ օգտագործելու և բարեկարգված պահելու անհրաժեշտությունը, առաջարկվում է հողի հարկի գծով արտոնություն տրամադրել Սիմոնյան կրթական հիմնադրամին՝ ընթացիկ տարվա համար հաշվարկված պարտավորությունների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Հալաբյան փողոցի h.16 հասցեում Սիմոնյան կրթական հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված՝ հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող հողամասի հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 01.12.2014թ. դրությամբ կազմում է 1 715 800 /մեկ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր/ դրամ, որի համար Սիմոնյան կրթական հիմնադրամի գլխավոր տնօրենը դիմել է օրենքով սահմանված կարգով հողի հարկի արտոնություն ստանալու խնդրանքով, նշելով, որ հիմնադրամը, հանդիսանալով քննարկվող զբոսայգու ենթավարձակալը, այն պահպանում է պատշաճ վիճակում և մինչ այժմ այգու բարեկարգման և պահպանման համար կատարել է ավելի քան 600 000 000 ՀՀ դրամի ծախս: Հիմնադրամը նշել է, որ այդ ծախսերի հետ մեկտեղ վճարում է նաև ենթավարձակալության վճար, որը տարեկան կտրվածքով կազմում է շուրջ 12 000 000 ՀՀ դրամ, մինչդեռ՝ հիմնադրամը տվյալ տարածքում իրականացնում է բարեգործական կրթական ծրագիր, որը շահ ստանալու նպատակ չի հետապնդում:

Հաշվի առնելով Սիմոնյան կթրական հիմնադրամի գլխավոր տնօրենի գրությունը՝ նպատակահարմար եմ գտնում տրամադրել 1 715 800 /մեկ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր/ դրամի չափով հողի հարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ